## 109. ԷՇ ԹԱՔԱՎԸՐԸ

Մի թաքավըր ա ըլըմ։ Էս թաքավըրը քշերը ժըղովուրթի միջին ման ա կյալի, տըենա վըենց են ապըըմ։ Մի քշեր էլ մի քյուչով անց կենալիս մի տըեղ լիս ա տըենըմ, ասըմ ա. «Մի տըենամ, էն ինչ լիս ա»։ Կյալիս ա ըտի, մըտիկ ա անըմ, տըենըմ՝ իրեք ախչիկ իրար հետ զրից են անըմ, մինը ասըմ ա. «Վըեր թաքավըրը ինձ առնըի, նըրա մըհար հենց խալըչա կկյործեմ, վըեր ըսկի տըեհած չի ըլի»։ Մինն էլ ասըմ ա. «Վըեր թաքավըրը ինձ առնըի, նըրա մըհար հենց ճաշ կեփեմ, վըեր ըսկի կերած չի ըլի»։ Էն մինն էլ ասըմ ա. «Վըեց թաքավըրը ինձ առնըի, նըրա մըհար մի վըեսկեքյաքյուլ տըղա, մի վըեսկեքյաքյուլ ախչիկ կըպիրեմ»։

Հըլե տհանք էտ զըիցը պըծնըմ են, թաքավըրը տուրը թակըմ ա, կյալիս ա էտ իըեքին էլ տանըմ ա, իրեքն էլ քվերտինքեն ըլըմ, էրկուսին ասըմ ա. «Տուք ծըեզ մըհար պալատըմը ապրեցեք, էն վըեսկեքյաքյուլ ըեխա պիրողը իմ կընիկը կըլի»։

Թաքավըրի վազիրին մի ախչիկ ա ունենըմ, վաղեց մըտկըմը տըիլ ա, վըեր իրան ախչիկը տա թաքավըրին։ Մի օր էլ մտնըմ ա, վըեր թաքավըրը ուրուշի ա առել։ Սա էտ օրվանից մակըմը տնըմ ա, վըեր էտ կընգյա կըլխին մի օյին անի։ Ըրեբի մի օր էտ կընգյա ազատվըելու ցավը փռնըմ ա, թաքավըրը վազիրին ասըմ ա. «Տատմըեր կանչիլ տու, կնիկս ցավըմ ա, ըեխա զի պիրիլ»։

Վազիրի մըեըն էլ լավ տատմըերութին ա գյըդենալիս. ը-

ըըմ, կյա̈լիս ա մորը ասըմ ա, վըեր. «Թաքավըրերի կընգյա̈ ցավը փըռնել ա, հենց արա, վըեր տըրա̈ն կորցնըիլ տանք, վըեր իմ քըվորը առնըիլ տանք»։ Մըերը ասըմ ա. «Բա վըե՞նց անեմ»։ Վա̈զիրը ասըմ ա. «Ես կըքյնա̈մ էրկու շան լակոտ՝ նոր ըլա̈ծ կըպիրեմ ընդի, տըռա̈ն տակին կըպահեմ, հըլե նա̈ ազատվըի թըչէ էտ ըեխեքը պփ ինձի, շան լակոտնին տիր կողկին, նա̈ էտ հադաղին հու իրան կորցրած դի ըլիլ, կլխի չդի ըլիլ, թե տու ինչ աբիր։ Վըեր թաքավըրերը կյա̈, տու տըհա̈նք շըհանց կըտաս, կասես՝ էս ա նրա̈ պփրած ըեխեքը»։

Վա̈զիրը ծըեռած էրկու թա̈զա̈ ըլած թո̄ւլա յա տընըմ մի պուճո̄ւր զութիկըմ ու վըեր ունըմ քյնըմ ընդի, հըլե էտ կընիկը ըեխեքը պիրըմ ա թըչէ՝ տատմըերը պիրըմ ա իրան տալըի։ Էս վա̈զիրը շան թո̄ւլենին տալիս ա էտ տատմորը, ըրեխեքը տընըմ զութկի միջին, չորս զոլը լա̈վ ծո̄ւթ քսըմ ու քցըմ ա ճո̄ւրը։

Պառավն էլ շան թո̄ւլենին պիրըմ ա ծընդկանի կըշտին տընըմ, նա̈ էլ իրանից քյա̈ցած ա, սկի պա̈նի կըլխի չի։ Մըխելից եդը, թաքավըրերը կյա̈լիս ա ըեխանցը տըենալու, էս պառավը կուզիկ-մուզիկ, թմըփ-թըմփալա թաքավըրերի աղաքն ա կյա̈լի, ասըմ ա. «Է՜ թաքավըրեր ջան, էլ ասըիլ մի ինչ ա ըլել, խայտառակ ըլա̈նք»։ Թաքավըրերը ասըմ ա. «Խի՞»։ Ասըմ ա. «Կնիկտ էրկու շան թո̄ւլա յա պիրել, գյիդըմ չեմ, ինչ անեմ, դո̄րը կորցնեմ»։

Թաքավըրերը վըեր կյա̈լիս ա, տըենըմ ա կընգյա̈ կողքին էրկու շան թո̄ւլա̈. էլ վըե՛չ ստուգըմ ա, վըե՛չ հարց ու փորց ա անըմ, վըե՛չ հարցաքննըմ ա, հըլե նըհե իշի ղայդի հըփատըմ ա ու հըրաման ա տալըի, ասըմ ա. «Վըեր տա̈ շան ղայդի լակոտնըի ա պփրել, ուրեմը սա̈ շուն ա, տարեք շների կըշտին ժնջըլո̄վ կապըեցեք ու շան ղայդի լակ տըվեք, թող ուտըի»։

Էս խեղճ ու ա̈նմեղ կընգյա̈նը տըհենց էլ անըմ են. տանըմ են ընդի կապըմ, շան ղայդի լակ տալըի, ինքն էլ վա̈զիրի քվոր հետ փսակվըմ ա։

Նա̈ թող տըհե ըտի տանջվի, մըենք խա̈բա̈րս տանք էն էրկու ա̈նմեղ բալեքնէրիցը։ Ծո̄ւրը սըհա̈նց տանըմ ա, տանըմ ա, դեմ ա անըմ մի ճղացըի ճըրի։ Վըեր բիրղա̈ն ճաղւադր կաղնմ ա, հու ճըղա̈ցպանը տո̄ւս ա թուչըմ, տըենըմ ա մի պո̄ւճո̄ւր զութըիկ, նովին դեմ ա ըլել։ Սա ծըեռաց հանըմ ա ու պփրըմ, պա̈ց ա անըմ, տըենըմ ա էրկու պո̄ւճո̄ւր ըրեխա, մինը տըղա, մինը՝ ախչիկ. ախչիկը տղի ծիծիկն ա պեռնըմը ծըծըմ, տըղեն էլ ըխչկա ծիծիկն ա պեռնըմը ծըծըմ։

Էս ճըղացպանն էլ ըսկի բեխա չի ունենըմ, սա̈ ուրխութենի-ցը քիչ ա մընըմ պար կյա̈, ծուլ-ծուլ ա ըլըմ, ուրխանըմ ու վազ տալըի կընդյա̈ կուշտը. «Ա՜ կնիկ, բա ասըիլ չես, թե սատոծ մըեզ խեղճ եկավ, անղավակ չի հիլ արավ, մըհետից էրկու ղավակ տը-վավ՝ մի տղա, մի ախչիկ, էն էլ ի՜նչ ղայդի, էրկուսն էլ վըեսկա-քյա̈քյուլ»։

Տըհա̈նք էս էրկու բեխին էլ պահըմ են մեծըցնըմ, լա̈վ հքցը-նըմ, լա̈վ ուտըցնըմ։ Վըեր հասնըմ են շկոլի, էրկուսին էլ ղըգըմ են շկոլը՝ լա̈վ ուսում են առնըմ։ Իրանք էլ էն ղայդի ուղուրով, էն ղայդի շնեքով ու շընորքով են ըլըմ, վըեր տըեսնողը ասըմ ա. «Էր-նակ ծըեր տո̈ւրո̈ւնչը»։ Վըեր էրկուսն էլ տա̈ռնըմ են արթեն նշան-վըիլու, թա̈րսի պըես էտ ճըղացպանն էլ, իրան կրնիկն էլ մըեռնըմ են։ Սհա̈նք արենըմ են, վըեր կյեղըմը էլ ապրիլու հնար չի ունեն, իրանց ըլա̈ծ-չըլա̈ծը ծախըմ են ու կյա̈լիս են էտ թաքավըերի քա-ղաքը, ըտի տուն շինըմ ու ապրըմ։ Մի օր թաքավըեըն ու վա̈զիրը իրար հետ ման կյա̈լիս, տըեսնըմ են, վըեր իրանց պալատըիցը մը-խեյի դենը, էտ քյուչի ղրաղին մի թա̈զա տուն ա էվլնացել էն տըե-սակ լա̈վ սո̈ւրո̈ւն տուն ա, վըեր էլ ասըիլու չի։ Թաքավըեըը ասըմ ա. «Վա̈զի՜ր, մի տըես, էս ի՞նչ տուն ա, էս վըե՞րդիյան են եկել կանչի կյա̈ն իմ կուշտը»։

Վա̈զիրը կյա̈լիս ա ըտի, տըեսնըմ ա մի սո̈ւրո̈ւն վըեսկահո̈ւս ախչիկ, ասըմ ա. «Ախչի՜կ ջան, տո̈ւ ո՞վ ես»։ Ասըմ ա. «Ես ճղաց-պանի ախչիկ եմ, իմ ախպոր հետ եկել ենք ըստի»։ Ասըմ ա. «Ախպերդ ի՞նչ ա անըմ»։ Ասըմ ա. «Նա̈ ֆըերս ա անըմ, ես էլ ծիյտնը պահըմ եմ, ապրըմ ենք»։ Ասըմ ա. «Վըեր ախպերտ կյա̈ տուն, կասըես թաքավըեըը կանչել ա, թող էքուց կյա̈ իմ կուշտը»։

Համա ինքը կյա̈լիս ա թաքավըեըին ասըմ ա. «Ասեց՝ տո̈ւք ո՞վ եք, վըեր ես կյա̈մ ծըեր տուն»։

Վա̈զիրը կյա̈լիս ա մոըը ասըմ ա. «Ա՜յ մըեր, ըսօրի քյա̈ցել եմ մի տըեղ, ընդի քիր ու ախպըեր են ապրըմ, քվոր մաղերը վըես-կա էր ու ինքը էնքա՜ն սո̈ւրո̈ւն էր, ախպերը տանը չէր, հրցըի, ասըեցի՝ ո՞ւմ բեխեքն եք։ Ասըեց՝ մըեր հերնըմըերը ճղացպան են ըյել։ Սիրտս վըկայեց, վըեր տըհա̈նք էն բեխեքը դեն ըլիլ-պարդվըի։ դի՝ կորած ենք։ Կարըմ ես՝ էքուց քյնա̈ ընդի, ըխչկա հետ խոսա, տըես, թե նըհա̈նք են՝ երկուսն էլ վըեսկաքյա̈քյուլ են. ու էտ ճղացպանըին էլ բեխեք չի ունեցել, եթե մըենակ էտ էր-կուսն են, ու իրանց տարիքն էլ մա̈ցի, վըեր ճուխտկաթայ են,

արթեն պարզ ա, վըեր նըհա̈նք են։ Մի հանգով ախպոըր մի զոլըի վըա̈ կոցնըիլ տաւ. կըմնա քիրը, քվոր հետ գործը հեշտ կըլի»։

Պառավը վըեր ա կենըմ, կյա̈լիս ա ըտի, ըխշկա հետ զրից անըմ ա, հարց ու փորց ա անըմ, տըենըմ ա, վըեր տըհա̈նց էրկուսի մազըերն էլ վըեսկա են, էրկուսն էլ ճուխտկաթայեր են ու ֆըրանք էլ վըե՛շ քիր ունեն, վըե՛շ ախպեր. հա̈մա̈ն էնքան տրեկան են՝ ինչքան տարի ա անց կցել էն օրից, վըեր պառավը էն ըեխանցը տվավ տղին, տարան դեն քցեցին։

Պառավը, վըեր լա̈վ համոզվըմ ա նըհանք են, ասըմ ա. «Բալա՛ ջան, տու ինչ ես անըմ»։ Ասըմ ա. «Ես իմ ախպոր ծիյանն եմ պահըմ, ինքն էլ ֆըերս ա անըմ, ապըըմ ենք»։ Ասըմ ա. «Վի՜, վի՜ քոռանամ ես, բա ախչիկն էլ ծիապահ կըլի, խի ես տու ծիապահ. էսինչ տըեղը թուխ փափախավըերնի կա, ախպորտ ասա՝ թող քյնա̈ նըհա̈նցից մինը պիըի, նա̈ ծիապահ կըլի, տու էլ քեզ մըհար ազատ քյեփ կըքաշես ու քու տան գործը կանես։ Մըեր քաղաքըմը շատ ամոթ ա, վըեր ախչիկը ծիապահ ըլի»։

Պառավը բըախըմ ա, կյա̈լիս ա տուն, ըըուգյունը, վըեր ախպըերը կյա̈լիս ա, քիրը ասըմ ա. «Ախպե՛ր ջան, ասըմ են՝ էս աշխարըմը ա̈դա̈թ չի, վըեր ախչիկը ծիապահ ըլի։ Մի աշխար կա, սև փափախավըերների աշխար են ասըմ, ընդիյի մարթիքը լա̈վ ծիապահնըի են, չիմն էլ ընդիյան են պիըըմ իրանց ծիապահնիրին»։

Էքսը ախպըերը ծին նստըմ ա ճամփա ա ընգյնըմ, քյնըմ ա, քյնըմ ա, մըշևը մի պառավ բիձա ա պըտահըմ, ասըմ ա. «Պա̈րի օր, ապըի»։ Ասըմ ա. «Աստու պարին, բալա ջա՛ն»։ Ասըմ ա. «Ապի ջան, սըև փափախավըերների աշխարը վըե՞րդի ա»։ Ասըմ ա. «Բալա ջա՛ն, էտ ով քեզ սվըցրավ, տա̈ դյեղան-գյա̈լմա̈զի ճամփեն ա. ըստիյով էնքան են բ ա̈ցե, համա ետ չեն էկել, լա̈վ կըլի բըախես՝ ետ տա̈ռնա̈ս, ջահիլ ես, ափսուս ես»։ Ասըմ ա. «Չէ՛ ապըի ջա՛ն, չըքել ըսօր ես հըլա̈ իմ փռնած գործիցը կիսատ ետ չեմ տա̈ռել, վըեր ըսօր էլ ետ տա̈ռնամ։ Տըղամարթը, վըեր մի գործը ըսկսըմ ա, պըետք ա չքել վերշը անըի, ամոթ ա, վըեր կիսատ բըախի»։

Սա̈ վըեր ըհե ա ասըմ, բիձի քյեփը կյա̈լիս ա, ասըմ ա. «Բալա ջա՛ն, դե վըեր տըհե ա՝ արի մի էրկու խրատ սվըցնեմ, նոր քյնա̈»։ Ասըմ ա. «Ասա՛, ապի ջա՛ն, ես հու տըհե պա̈նի մըհար մըեռած եմ»։

Ասըմ ա. «Բալա՛ ջան, էնքան կըքյնա̈ս, վըեր մի ղալին ցաքուտ կըպըտահի. ծիտ հենց միշովը կըքշես, վըեր մի ցաքու էլ

ա դիպչես վրեն, դիբար թըշէ՝ տու էլ, քու ծին էլ քար կըտառնաք։ Ջտիյան անց կըկենաս մըհել էնքան կըքյնաս, վըեր աղաքտ մի լեն կյետ կըկյա. Համա միշին ճուր չի քըեվըմ, չիմ ղում ա, էնքան խորն ա, վըեր վըրովը անց կենալիս՝ տու էլ, ծիտ էլ միշին հենց կըխըրվեք, վըեր քաթմիշ կլեք։ Տու հասնես ընդի թըշէ՝ ծիյուցտ վեր արի, էտ թմրի ղրաղըրին մըխելի քյնա. ընդի մի թալա կա, էտ թալըմը ծիտ լավ կուշտըցրու, թալըի ըխպրի ճըիցը հա՛մ տու լավ խմի, իրեսդ լվա, հա՛մ ծիյուտ լավ խըմցրու ու լղցրու։ Էտ վըեր պրծնես հա՛, մըխելի ծիտ ման կածըես ու կընըստես մի հիթսուն մետրի վրա կըքյնաս ու ղզղնած կկյաս. հենց կըքշես, վըեր էտ լեն ղումկուտը անց կենաս։ Անց կցար թե չէ՝ ծիտ հանդիստ կըքշես։ Մըխելի կըքյնաս աղաքըտ մի կյեղ դի կյա, էտ կյեղի միշովը ծիտ կըթոցնես եդնետ ղի դեն տալ. «էկա՛վ անցկցավ, էկա՛վ անցկցավ»։ Տու սամսեն ետ չի մըտիկ անես։ Էտ կյեղը անց կկենաս, մըխելի կըքյնաս։ Ընդի էլ մի ախպուր կա, ըլետ տու էլ, ծիտ էլ էտ ըխպըիցը կըխմեք ու եդըըեդ կըըշես, կըկյաս տըհանց միշովը անցկենալիս ծըեռտ կըբցես ու մնի փափախը կըթոցնես։ Տըհանք եդնետ ղի դեն տալ. «Տարա՛վ, տարա՛վ»։ Տու ետ չի մըտիկ անես, թոցրած կկյաս, հըլե նըհե ղզղնած էտ կյետն էլ անց կըկենաս ու նոր ըտի կարաս դինջանաս։ Կըկյաս տուն կըտենաս էտ մարթը քու ղաքին ա էկել ծըեր տուն։ Տու քու ծըեռովը փափախը կլխին կտնես։ Նրան վըեր կրացիր պիրես, տու արթեն փըկված ես, նըհանք հա՛մ շատ իմաստուն են, համ էլ շատ ղոչաղ»։

Էս տըղեն հենց էտ մարթըի ասածըի ղայդի էլ անըմ ա։ Կյալիս ա տըենըմ ա, վըեր էն մըըթկերանցիցը մինը հըես իրանց տանը, կյըլոխը պաց նստած։ Տըղին տըենըմ ա թե չէ, ասըմ ա. «Ա՛ քու տունը շինվի, բա տըհե ղարափաթ կանեն, փափաղս վըե կալար ու թռար, կբացի վըեչ թե քթնեմ, կյլոխս սառավ»։

Տըղեն փափախը տընըմ ա էս մարթի կըլխին ու սա մընըմ ա ըտի ու մնըմ մըչև մահ։ Ըռավըետը հաց ուտըիլիս բիրդան տըղեն ասըմ ա. «Պա՛հ ես ըսօր պըետկ ա քյնամ թաքավըերի կուշտը»։

Էտ մարթը ասըմ ա. «Ես հետս մի շուն եմ պիրել, իմ շունը իմաստուն ա, հետդ կտանես. ինչ ճաշ տան, ինչ տռ ուտըես, առաչ մի քիչ կտնես շան ղաքին, վըեր նա ուտըի, տու էլ կուտըես, դուրը նա քյնա տու էլ դենը կըքյնաս»։

Սա̈ շունը հետը վըեր ա ունըմ քյնըմ։ Էդ վա̈զիրը ծըմփին մի քանըի տըեղ փոս ա կտրիլ տվել ու վըո̈վը խալիչա փռել, վըեր նա̈ կյա̈ մեչը ընդյնի։ Էս տըղեն շունը վըեր ա ունըմ քյնըմ. շունը աղաք ա ընգյնըմ, դո̈րը շունը քյնըմ ա, նա̈ էլ եդնեն ա քյնըմ։ Կյա̈լիս են Թաքավըերի կուշտը։ Տըղեն վեր Թաքավըերին քաղաքավարի պարևըմ ա ու հետը խոսըմ՝ հենց առաչի տըենալուցը Թաքավըերի աչկին տիր ա կյա̈լի, ու ինչքան նըհա̈նք իրար հետ խոսըմ են, էնքան նրա̈ն Թաքավըերը սիրըմ ա։ Թաքավըերը տենըմ ա, վըեր վըենց իրան արինը քաշըմ ա դրա̈ էտ տըղեն։ Իրար հետ քյնըմ են սաղ իրան պալատի պա̈ները շըհանց ա տալըի, խազընեն շհանց ա տալըի. ու իրան մորն էլ ա ընգի տըենըմ, ժընշլո̈վ կապած, շնըրի կըշտին, համա գյիդըմ չի. վըեր իրան մըերն ա։ Սըհա̈նք ըտիյան կյա̈լիս են պալատ, նստըմ կերուխումի։ Էս վա̈ղիրը տղի ճա̈շի մեչը տեղ ա քըցըմ ու պիրըմ տըընմ տղի ղաքին։ Տղեն մի քիչ տըընըմ ա շան ղաքին, շունը ֆըետ ա ըընմ, համա ուտըմ չի։ Տըղեն տըենըմ ա, վըեր շունը կերավ վըեչ, ինքն էլ չի ուտըմ։ Վա̈զիրը ասըմ ա. «Խի՞ չես հաց ուտըմ»։ Ասըմ ա. «Էն ժնշլով կապած կընգյա̈նիցը սրտմա ըլա»։

Վըեր կերուխումը պըծնըմ ա, սա̈ կյա̈լիս ա տուն. պատրաստութին ա տըենըմ ու մի իրեք օրիցը եդը Թաքավըերին կանչըմ են իրանց տուն՝ ղոնաղ։ Վըեր լա̈վ ուտըմ, խըմըմ, քյեփներուն պա̈ց ա ըլըմ, էս իմաստունը ասըմ ա. «Թաքավըերը ապրած կենա, մը լա̈վ հեքյա̈թ եմ մա̈ցել իմ պապիցը՝ ըեխա վախտին, շատ հին հեքյա̈թ ա, հիլա ասըեմ, անգաճ տըեք»։ Թաքավըերը ասըմ ա. «Անգաճ կըանենք, ասա՛»։

Ասըմ ա. «Ժա̈մանա̈կով մի էշ Թաքավըեր ա ըլըմ։ Էս էշ Թաքավըերը օրերի մի օր տո̈ւս ա կյա̈լի ժողովուրթի մեչը՝ ման կյա̈լ։ Մի փո̈ւգյո̈ւ էլ մի ճմփով անց կենալըիս, իրեք ախչիկ ա տըենըմ, իրեքն էլ վըեր ա ունըմ պիրըմ պալատը»։ Սա̈ վըեր սհե ասըմ ա. վա̈զիրը կըլխի ա ըլըմ, վըեր իրան սև գործը պա̈ց դի ըլիլ, ասըմ ա. «Թաքավըերը ապրած կենա, քյնա̈նք»։ Թաքավըերը ասըմ ա. «Չէ՛, հիլա հեքյա̈թը պըծնի, նոր»։

Սա̈ սըհե մինչև վերչը էտ հեքյա̈թը ասըմ ա, պըծնըմ ա. արթեն ամեն ինչ պա̈ց ա ըլըմ, Թաքավըերը ըստի կըլխի ա ըլըմ, վըեր էս իրան ըեխեքն են, էն էլ իրան կընիկն ա, շների կշտին կապած։

Թաքավըերը ծըեռաց տըհա̈նց վըեր ա ունըմ պիրըմ տուն, իրան կընգյա̈նն էլ տանըմ ա բաղնիք՝ լղցնիլ տալըի, շորեր փո-

*խիլ տալրի, պիրրմ տուն, վ̈ազիրին ու իրան Թ̈աքունին էլ կրտո-րիլ ա տալրի ու օխտը օր, օխտը քշեր ուտըմ, խմըմ, քյեփ են անըմ։ Էտ իմաստունին էլ պալատըի միջին են իմաստունի գործ տալրի։*

*Իրանք հասնըմ են իրանց մուրազին, տո̈ւք էլ հասնեք ծըեր մուրադին։*

